

Ստեփանոս Սխնեցու բացայայտ վկայու-
թիւնը ազաւաղ եւ անհիմն մեկնարանու-
թեամբ: Եթէ Հ. Ա. այն գրութիւնը պաշտ-
պանէր որ բարբառների բացատր մեծ չէր
Ե. դարում, ինչպէս հետագայում, կարելի
է համաձայնել: Բայց հիմնովին բացասել,
ոչ մի բանաւոր հիմք: Նոյն խոկ իր բերած
քաղուածներում նկատուում են աշխարհա-
բարի հետքերը, ինչպէս ստորագասականի
ղեղչը և ներկայի գործածութիւնը ստորա-
գասականի իմաստով «(եթէ զայ ինձ», «ես
ոչ սպանանեմ»): Ինչպէս և մեկնենք բար-
բառների ծագումը, պէտք է ընդունինք որ
այս խնդրում առաջնակարգ դեր են ունե-
ցել այլապիսի բնիկները: Եթէ հայ զանգ-
ուածը բաւական ոյժ է ունեցել հարկադրե-
լու իր լեզուն երկրի կենտրոնական մասե-
րում, ուր հո՞ծ մեծամասնութիւն է կազ-
մել, նրա ազդեցութիւնը համեմատաբար
տկար պէտք է լինէր ծայրագաւտներում,
ուր բնակչութիւնն աւելի խոսն էր: Այս
հանգամանքը արդարացնում է հիմնովին ե-
զերական բարբառների գոյութիւնը: Հ. Ա.
հնարաւորութիւն ունի զրտելու թէ ինչպէս
երևանի բարբառը հետզհետէ և զրեթէ առ-
տիճանաբար փոխուում է Դարբաղի (Սը-
ցախի) բարբառին, անցնելով Սխնեցու բար-
բառից դէպի Տաթեւի և այնտեղից դէպի
Շուշի:

Նորագոյն բարբառների մասին նոյնպէս
Հ. Ա. այն կարծիքն է յայտնում որ նրանք
ոչ յառաջ քան 9-12 դարեր են ծագել: Բայց
գժրախտաբար չի բացատրում թէ որոնք էին
այն նոր ազգակները, որ յանկարծ ծուռա-
ցին նախկին միապաղաղ լեզուին զանազան
բարբառների: Թ-ԺԲ գար համեմատաբար
պայժառ շրջան է Հայոց պատմական անց-
եալում, երբ փոքր նախարարական տները
միանում են խոշոր կենտրոններ ստեղծելու
և իրանք անհետանում մեծ միութեանց
մէջ: Հ. Ա. ի տեսակէտը այս խնդրում ան-
հատական է, զոնէ մերը չէ. և այն փա-
տարանութիւնը, որ բերում է ինպատ իր
տեսութեան, ի վիճակի է որոշելու բար-
բառների Terminus ad quem, բայց ոչ a quo:

Բարբառների գոյութիւնը ժխտելուց
յետոյ, երբ անցնում է Նորայրի տեսութեան
սակեղարեան չորս կարգի հեղինակութեանց
վերաբերեալ, և արդարացի քննութեան է
ենթարկում և Նորայրի տեսութիւնը, նրա

զրտած տարբերութիւնները վեր ածելով
պարզ ոճաբանական խորութեանց, յան-
կարծ նահանջում է բռնած շաւղից և ըն-
դունում որ կային եզնիկեան և Կորիւնեան
բարբառներ: Այս ևս մեր տեսակէտը չէ:


Աշխատութեան այն մասը որ նուիրած
է ժամանակակից բարբառների նկարագրու-
թեան և գասաւորութեան շատ աւելի պէտք
է բարձրացնէին 'աշխատութեան արժէքը,
եթէ աւելի մանրամասն լինէր: Հ. Աճառ-
եան այս կայուածում կատարեալ տէր և
տիրական է: Ոչ ոք չզրտէ նրա նման մեր
բարբառները: Ո՛րքան ցանկալի կը լինէր,
որ այս մասը աւելի ճոխ լինէր, ստորա-
բաժումները լիովին թուած հանդերձ հըն-
չարանական և ձեւաբանական յատկութիւն-
ներով, քանի որ բարբառները կորստեան
վտանգի առաջ են կանգնած և հետագային
անհնարին պիտի դառնայ նրանց ուսումնա-
սիրութիւնը:

Ձերկարեմ այլևս: Նկատողութիւններս
ցոյց են տալիս որ Հ. Ա. ի երկը իրապէս
կարեւոր է և արժանի Ձերգ Սրբազնութեան
քաջալերութեան եւ գնահատման: Ձեմ
կարծում, որ յայտնածս կարծիքները օտա-
րտի թուին Ձեզ, զտաս հեմ, որ նոյնա-
նման տպաւորութիւն է զործել նաև Սըր-
բազնութեանդ վերայ:

Մնամ սպասուոր պատրաստակամ Ա-
մենապատիւ Հայրութեանդ, յարգալիբ ող-
ջիւնօք

միշտ անձնուէր
Ն. ԱՄՈՆՑ

23 Օգոստոսի 1934
Բրիտալի



ՆՈՐՉՈՒՐԳ ԵՒ ՆՕՍԳ

Ժամանակի վերաբերման պահ. չսակ
մեր միկ վայրկեանը, առանց ընդունելու անոր
արժիքը. չբողոմիք որ ժամերը շոպչորեկ և
անպսող դարս ելնեն մեր ձեռքերէ. . . չնեւեմ
որ մեր միկ օրը սահի, առանց ստուարցնելու
մեր ծաւօրութիւններուն և առաջինութիւննե-
րուն զանձր: